Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-475-19.12.2022-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքում (այսուհետ՝ օրենք) կատարել հետեւյալ լրացումները եւ փոփոխությունը.

1. Օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է տարեկան ծրագրերի միջոցով, որոնք հաստատվում են ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաստատումից հետո:

2. Օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ.6-րդ» ենթակետում «շախմատի պատանեկան օլիմպիադայում» բառերից հետո լրացնել «,Ռազմական սպորտի միջազգային խորհրդի՝ զինվորականների համաշխարհային խաղերում, զինվորականների աշխարհի առաջնություններում, զինհաշմանդամների համաշխարհային խաղերում եւ զինհաշմանդամների աշխարհի առաջնություններում» բառերով:

3. Օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը «դ.16-րդ)» ենթակետից հետո լրացնել նոր՝ «դ.17-րդ)» ենթակետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«դ.17) օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար մարզիկներին, հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, երկրորդ եւ անձնական մարզիչներին, բժիշկներին ու մերսողներին տրամադրվող սպորտային նպաստի եւ դրա տրամադրման կարգի վերաբերյալ.»:

Հոդված 2. 1. Սույն օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:

2. Օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար մարզիկներին, հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, երկրորդ եւ անձնական մարզիչներին, բժիշկներին ու մերսողներին տրամադրվող սպորտային նպաստի չափերն ու դրա տրամադրման կարգը սահմանվում են Կառավարության կողմից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

~~Առաջին ընթերցում~~

~~Կ 475-19.12.2022-ԳԿ-011/1~~

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՕ-196 օրենքում (այսուհետ՝ օրենք) կատարել հետեւյալ լրացումները եւ փոփոխությունը.

~~1.~~1. Օրենքի 4-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է տարեկան ծրագրերի միջոցով, որոնք հաստատվում են ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաստատումից հետո:

2. Օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետի «դ.6-րդ» ենթակետում «շախմատի պատանեկան օլիմպիադայում» բառերից հետո լրացնել «,Ռազմական սպորտի միջազգային խորհրդի՝ զինվորականների համաշխարհային խաղերում, զինվորականների աշխարհի առաջնություններում, զինհաշմանդամների համաշխարհային խաղերում եւ զինհաշմանդամների աշխարհի առաջնություններում» բառերով:

~~2.~~3. Օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետը «դ.16-րդ)» ենթակետից հետո լրացնել նոր՝ «դ.17-րդ)» ենթակետով՝ հետեւյալ բովանդակությամբ.

«դ.17) օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար մարզիկներին, հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, երկրորդ եւ անձնական մարզիչներին, բժիշկներին ու մերսողներին տրամադրվող սպորտային նպաստի եւ դրա տրամադրման կարգի վերաբերյալ.»:

~~3. 4-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետեւյալ բովանդակությամբ.~~

~~«Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է տարեկան ծրագրերի միջոցով, որոնք հաստատվում են ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ տվյալ տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաստատումից հետո:~~

Հոդված 2. ~~***Անցումային դրույթներ***~~

1. Սույն օրենքի 1-ին հոդվածի ~~1-ին~~ 2-րդ մասից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ քառամսյա ժամկետում:

2. Օլիմպիական խաղերին նախապատրաստվելու համար մարզիկներին, հավաքական թիմերի գլխավոր (ավագ) մարզիչներին, երկրորդ եւ անձնական մարզիչներին, բժիշկներին ու մերսողներին տրամադրվող սպորտային նպաստի չափերն ու դրա տրամադրման կարգը սահմանվում են Կառավարության կողմից՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-475-19.12.2022-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**1-ին հոդված**	1. 1-ին հոդվածում նշված «ՀՕ-196 օրենքում» բառերից հետո փակագծերում նշել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը: 2. 1-ին հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերում համարակալումից առաջ լրացնել «Օրենքի» բառը, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը:	Ընդունվել է	Ընդունվել է
		1-ին հոդված	3. 1-ին հոդվածով լրացվող մասերի համարակալումն առաջարկում ենք վերանայել՝ 3-րդ մասը նախատեսել որպես 1-ին մաս՝ նկատի ունենալով, որ դրանով նախատեսվում է փոփոխություն կատարել 4-րդ հոդվածում: 3-րդ մասը դարձել է 1-ին, ըստ այդմ մասերի համարակալումը փոխվել է:		
		1-ին հոդված	**4**. 1-ին հոդվածի 1-ին՝ խմբագրված 2-րդ մասում «դ.6» ենթակետը» բառերի փոխարեն լրացնել «դ.6-րդ ենթակետում» բառերը: Դասական թվականների ճիշտ գրելաձևն ապահովելու նպատակով առաջարկում ենք նաև 1-ին հոդվածի 2-րդ՝ խմբագրված 3-րդ մասում առկա «դ.16» և «դ.17» բառերը փոխարինել «դ.16-րդ» և «դ.17-րդ» բառերով:		

2.	***ՀՀ կառավարություն***	**2-րդ հոդված** **2-րդ հոդվածի առաջին մաս**	**1.** Հանել «Անցումային դրույթներ» ձեւակերպումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջը: **2. 1-ին մասում՝** «1-ին մասից» բառերի փոխարեն լրացնել «2-րդ մասից» բառերը, հաշվի առնելով, որ 1-ին հոդվածի մասերի հաջորդականությունը փոխվել է:	Ընդունվել է Ընդունվել է	Ընդունվել է Ընդունվել է